«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Դիմիտրիի Ավետիսյան

Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Ռուզաննա Աղաջանյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն..... 2

Ներածություն..... 3

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում.....5

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրության դասավանդման ընթացքում.....11

Եզրակացություններ և առաջարկություններ.....16

Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում կրթական համակարգում ակտիվ կերպով իրականացվում են բարեփոխումներ: Դա հիմնականում պայմանավորված է ժամանակի նոր մարտահրավերներով, որոնց առաջքում աննախադեպ գիտատեխնիկական առաջընթացն է, տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը:

Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Բարփոխումների ֆոնին՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները:

Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը կրթական համակարգի շահագրգիռ կողմերին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների: Փստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում:

Նմանօրինակ նորարարական, մեթոդամանկավարժական հետաքրքիր հնարներով հագեցած, դաս սովորողը պահանջում է բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներից՝ այդ թվում աշխարհագրության: Արդյունքում կունենանք իր որոշումների մեջ ինքնուրույն, կրթության և կյանքի այլ ասպեկտներում նախաձեռնող, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ: Ստացվում է, որ նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն կտա սովորողին դառնալ դասի ընթացքի կենտրոնական սուբյեկտը, նա կդադարի հիմնականում լսողի իր դերում լինել, կսովորի, կսովորեցնի, կհետազոտի՝ ամրապնդելով մի շարք կենսական նշանակության հմտություններ ու կարողություններ ևս:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում

կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակությունները՝ ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևորում:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների համագործակցային, ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ աշխարհագրություն առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է կարևորել սովորողի դերը կրթական համակարգում՝ որպես նախաձեռնող, ինքնուրույն մտածող ու գործող, ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտեցող սյուբեկտի:

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի և ուսուցչի համագործակցությունը

դպրոցում

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն: Ուստի կարևոր ենք համարում ուսումնական հաստատության ուսուցչի դերը կրթության որակի բարձրացման գործում, դրան ուղղված վերջինիս կողմից իրականացրած կառուցողական քայլերը և, որ ամենակարևորն է, փոխհամագործակցությունը սովորողի հետ՝ որպես կրթության առաջնային շահակից: Այս համատեքստում առանցքային նշանակության հարց է ուսուցչի կողմից սովորողի ցանկացած նորորարական քայլերի խրախուսումը, վերջինիս ինքնուրույն գործելու պահանջմունքի բավարարումը, քանզի մոտիվացիան կրթական համակարգում ևս կարևոր բաղադրիչ է:

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական մտածողության, կարողությունների ձևավորումն ու զարգացումը այդ թվում աշխարհագրության դասերին ևս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Նախաձեռնությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է, որը մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է

հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [1]:

[1] http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

Ուսուցչի անձնային որակներն են՝

- սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն[2]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[3]:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի

[2] Նույն տեղում, էջ14:
[3] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Գ. Թերզյան, «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Երևան 2013, էջ 13:

մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության զարգացնող մյուս օղակը հենց սովորողն է՝ կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սակայն հատկանշական է, որ այս գիտակցումը հաճախ ժամանակավրեպ է դառնում, քանի որ կոնկրետ ժամանակահատվածում տեղի են ունենում լրջագույն բացթողումներ:

Այս պարագայում խնդիրը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[4]: Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրեն ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը: Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ, այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները: Հատկապես միջին և ավագ դպրոցի սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, նոր տեխնալոգիաներին, համացանցային տեղեկատվական հարթակներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում տեսաֆիլմերի դիտումն ու տեսասահիկների պատրաստումը: Նման համալիր միջոցառումներն ունակ են ամենաանտարբեր սովորողին անգամ բերել դեպի դասը:

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք

Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակ համացանցային հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով: Նման նորորարական մոտեցումները հիմնականում արդյունավետ են աշխատում, քանի որ սովորողն ազատ ժամանակ ինքնուրույն է գործում, նախաձեռնում հետաքրքիր նախագծեր ու կիրառում դրանք: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության առաջխաղացումը մեծապես կարելի է կապել նաև նախագծային ուսուցման հետ:

Ուսուցման նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է :

Վերջին տասնամյակներում նախագծային մեթոդի ներդրումը մի շարք առաջավոր երկրների կրթական համակարգերում, գալիս է փաստելու, որ նախագծային ուսուցման գերխնդիրն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման ընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց հավաքագրում և կիրառելու պատրաստակամություն:

Սովորողի մոտ վերը նշած կարողականությունները նախագծային մեթոդի օգնությամբ կարելի է զարգացնել նաև աշխարհագրության դասի ընթացքում: Օրինակ կարելի է իրականացնել ինտերակտիվ նախագծային աշխատանք: Աշխարհագրության ուսուցիչը սորտորեն կհամագործակցի տեխնոլոգիայի ուսուցչի հետ: Նախօրոք կազմած պլանի համաձայն՝ դասարանը կբաժանվի խմբերի: Ճանապարհորդություն թեմայի շրջանակներում սովորողները կունենան որոշակի

ժամանակ ընտրելու իրենց նախընտրելի թեման, թեմայի շուրջ տեղեկատվություն կհավաքեն, կպատրաստեն սահիկաշար: Արդյունքում՝ սովորողները ձեռք կբերեն միանգամից համալիր գիտելիքներ ու հմտություններ մի քանի ուղղություններով՝ տեղեկություն կստանան կոնկրետ երկրի, դրա քաղաքների, տեսարժան վայրերի մասին, իսկ սահիկաշարի պատրաստման արդյունքում կզարգանա նրանց ՏՀՏ ոլորտի գիտելիքները: Ուսուցիչը կարող է թույլ տալ, որ խմբերը գնահատվեն ինքնագնահատմամբ՝ արդյունքում ստեղծելով արդյունավետ հետադարձ կապ: Կարծում ենք կրթության ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը մեծապես կախված է նաև այն հանգամանքից, որ սովորողի ու ուսուցչի միջև գործի համագործակցություն, վստահություն և հարգանք:

Մանկավարժական այս մոտեցումը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնություն: Իհարկե, կարևոր են նաև նորարարական մոտեցումները, որոնք անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Նշենք, որ չենք բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը՝ հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը, որոնք այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս սովորողը հնարավորություն ունեցավ համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրության դասավանդման ընթացքում

Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին , դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Ստեղծագործական ունակությունների զարգացման մի հնար է «Գուշակություն» հնարը: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև[5]:

Աշխարհագրության դասին կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «Չինաստան», «Հնդկաստան», բառերը և աշակերտներին առաջարկել գտնել

[5] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020, էջ 23:

այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանը կարող է պարունակել տեղեկություն թե՛ տարածաշրջանային, թե՛ ժողովրդագրական, թե՛ դավանանքի տեսանկյունից: Արդյունքում՝ սովորողները քննարկում են, կարծիքներ հայտնում, ավելի բարդ օրինակների պարագայում կարող են օգտվել համացանցից:

Ստացվեց, որ դասի մեջ ուսուցիչը մի հետաքրքիր կայծ դրեց՝ նպաստելով, որ դասարանը համակարգված աշխատի: Դպրոցական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից է սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորումը: Վերջինիս հիմքը համակարգային տարածական մոտեցումն է՝ իր տարբեր մակարդակներով՝ համամոլորակային, տարածաշրջանային և տեղական կամ հայրենագիտական: Այս հնարն օգնեց, որ սովորողները հնարավորություն ունենան ընդհանրացումներ անլու, տարբերություններ գտնելու:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչները առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ: Գիտական աշխարհայացքի ձևավորումն արդյունավետ իրականացնելու համար պետք է նկատի ունենալ դրա մանկավարժահոգեբանական օրինաչափությունները (սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները), դպրոցական աշխահագրության կրթադաստիարակչական խնդիրները[6]:

Առհասարակ ցանկացած փոխգործուն հնարի կիրառման ժամանակ սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները: Նմանօրինակ աշխատանքների ժամանակ աշակերտը սովորում է նաև օգտվել ՏՀՏ մի շարք գործիքներից: Աշխարհագրության դասին կիրառվող տարատեսակ փոխգործուն մեթոդների առկայությունը սովորողին օժտում է հետևյալ հմտություններով՝

- Ինքնուրույնություն,
- կոլեկտիվ աշխատանքում սեփական ներուժը կիրառելու կարողություն,
- մեդիահմտությունների զարգացում,

[6] https://edumedia-depot.gei.de/bitstream/handle/11163/2180/791501744_2013_A.pdf?sequence=2 Հիմնական դպրոցի աշխարհագրությունառարկայի չափորոշիչներ և ծրագրեր:

- հետազոտելու, համացանցում որոնելու հմտություններ,
- թվային միջոցները գործածելու հմտություններ,
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում,
- ճաշակի զարգացում,
- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:

Դիտարկենք նման մեթոդների կիրառությունն աշխարհագրության դասին: Կարելի է կիրառել երկսյուն և եռասյուն աղյուսակներ, Վեննի դիագրամ, Կիսատ նախադասություն, Խաթարված հերթականություն և այլն: Օրինակ աշխարհի պետությունները խմբավորելիս կարելի է օգտվել երկսյուն աղյուսակներից: Նմանությունների ու տարբերությունների հստակեցման ու վերլուծության համար կօգնի Վեննի դիագրամը: Իսկ ահա դասի ամփոփման հատվածում կարելի է օգտվել Կիսատ նախադասություն հնարից:

Սովորողների համար աշխարհագրությունը, որպես ուսումնական առարկա էլ ավելի սիրելի ու հետաքրքիր է, քանի որ նրանք կարող են ուղղակիորեն տեսնել այն, ինչի մասին սովորում են տեսական նյութերում: Այդ իսկ պատճառով կարելի է թեստային աշխատանքները կազմել այնպես, որ լինեն բազմաբաղադրիչ և զարգացնեն սովորողի ստեղծագործական ունակությունները: Բերենք նման թեստային աշխատանքի օրինակ, որը նպատակ ունի ստուգել սովորողի ընդհանրական գիտելիքներն աշխարհագրությունից:

Թեստային աշխատանք

1. Նշիր, թե ո՞ր ռասայի ներկայացուցիչներն են պատկերված նկարում:

2. Ո՞րն է վառելիքաէներգետիկ արդյունաբերության դերը տնտեսության մեջ:
3. Ո՞րն է մետաղաձուլության դերը տնտեսության մեջ: Ավելացրու նաև քո կարծիքը թեմայի շուրջ:
4. Նշիր, թե տվյալ երկրներում կառավարման ի՞նչ համակարգ է գործում:

Գերմանիա	

Հյուսիսային Կորեա	
Անգլիա	

5. Ի՞նչ է տարաբնակեցումը: Որո՞նք են տարաբնակեցման ձևերը:
6. Ի՞նչ է հանքային ռեսուրսը: Ի՞նչ գիտես ՀՀ հանքային ռեսուրսների մասին:
7. Ի՞նչ դեր է կատարում քիմիական արդյունաբերությունը տնտեսության մեջ:
8. Տրված միջազգային կազմակերպություններից ո՞րին չի անդամակցում Հայաստանը:
   - Միավորած ազգերի կազմակերպություն
   - Հուշարձանների պաշտպանության միջազգային կազմակերպություն
   - Եվրոպայի համագործակցության և անվտանգության կազմակերպություն
   - Միջերկրածովյան միություն
9. Ի՞նչ է ազգային տնտեսությունը:
10. Ընտրիր մեկ պետություն և բնութագրիր դրա տնտեսությունը, արդյունաբերությունը, հանքային ռեսուրսները: Կարող ես հետազոտության համար տեղեկատվություն փնտրել համացանցում:

Աշխարհագրության ուսուցման շրջանակներում կարելի է օգտագործել զանազան դիդակտիկ պարագաներ: Շատ դեպքերում դրանք կարող են պատրաստել հենց սովորողները, որն էլ լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Այսպիսով, ակտիվացնելով սովորողների տեսաղական զգայարանը՝ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, նախապատրաստում վերջինիս դասին: Ուսուցիչը, աշխարհագրության ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարող է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին:

Ինչպես արդեն նշել էինք՝ կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը:

Արդի աշխարհագրական կրթական գործընթացը չի կարող բավարարվել միայն երևույթի մասին ներկայացված տեղեկությունների պարզ մտապահմամբ, անհրաժեշտ են նաև պատճառահետևանքային կապերի առանձնահատկությունների վերլուծման ընդունակության զարգացումը: Այսօր արդեն կարելի է ասել, որ ՏՀՏ-ի օգնությամբ իրականացվող դասագործընթացները սովորողների մոտ ձևավորում են վերլուծման, համակարգման, ընդհանրացման ու դասակարգման ունակություններ, նպաստելով նրանց դատողությունների և եզրահանգումների հիմնավորմանը: Մեր կարծիքով աշխարհագրության դասավանդման գործընթացում ՏՀՏ գործիքների կիրառման մեթոդիկան առանձնանում է նորարարական փոխներգործուն և ավանդական պահպանողական եղանակների համադրմամբ: Օրինաչափ է, երբ դրանց կիրառումն աշխարհագրության դասագործընթացում մեծապես նպաստում է դպրոցականների տեսողական և լսողական զգայարանների ինտենսիվ աշխատանքին, զարգացնելով նրանց տեսողական և լսողական հիշողությունը: ՏՀՏ–ների կիրառմանը զուգահեռ, ցանկալի է օգտագործել նաև ուրվագծային քարտեզներ, խաչբառեր, գործնական պարապմունքները անցկացնելիս ամպայման կիրառել դիտազննական պարագաներ, կողմնացույց, հեռաչափ, բարձրաչափ, ջերմաչափ և այլն[7]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ժամանակակից կրթության առանցքային հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկության առաջընթացը, որն այսօր աննախադեպ կերպով շոշափելի է դարձել:

[7] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/gittex/2018(1-2).pdf ՀՊՄՀ, Գիտական տեղեկագիր, Երևան, 2018, էջ 11:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ աշխարհագրության ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է ունենալ բարձր արդյունավետություն, եթե ուսուցումը զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում ենք, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն, բանակցեն ու ինքնադրսևորվեն:

Ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով: Կարևոր ենք համարում նաև այն միջավայրը, որում աշակերտը իրեն ապահով ու հանգիստ կզգա, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ:

Դասի ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի բոլոր սովորողների պահանջմունքներն առանձին-առանձին: Քարտային կամ անհատական առաջադրանքները կարող են կազմվել մի քանի բովանդակային մակարդակներով, որպեսզի բավարարեն հետ մնացող սովորողներին ևս, եթե կան այդպիսիք: Ինչու չէ կարևոր է նաև բարոյահոգեբանական միջավայրը. յուրաքանչյուր սովորող պետք է դասի ընթացքում իրեն կարևոր զգա:

Անշուշտ, մեր թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

Հույս ունենք, որ սույն հետազոտությունը խթան կհանդիսանա մեզ՝ ուսուցիչներիս համար մոտիվացվել դեպի նորը և մոտիվացնել սովորողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
2. http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
3. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Գ. Թերզյան, «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Երևան 2013:
4. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020:
5. https://edumedia-depot.gei.de/bitstream/handle/11163/2180/791501744_2013_A.pdf?sequence=2 Հիմնական դպրոցի աշխարհագրությունառարկայի չափորոշիչներ և ծրագրեր:
6. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/gittex/2018(1-2).pdf ՀՊՄՀ, Գիտական տեղեկագիր, Երևան, 2018: